

**ԽՈՐՀՐԴԻ 1988 թվականի նոյեմբերի 23-ի ՀՐԱՀԱՆԳ**

**Ճանապարհային տրանսպորտի վերաբերյալ սոցիալական որոշ օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) եւ ճանապարհային տրանսպորտում օգտագործվող տվյալների արձանագրման սարքերի վերաբերյալ թիվ 3821/85 կանոնակարգի (ԵՏՀ) (88/599/ԵՏՀ) իրականացման նպատակով ստանդարտ ստուգման ընթացակարգերի մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

հաշվի առնելով Խորհրդի ու անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների որոշումը, որն ընդունվեց Խորհրդի շրջանակում 1985 թվականի դեկտեմբերի 20-ին՝ նպատակ ունենալով բարելավելու ճանապարհային տրանսպորտի ոլորտում սոցիալական կանոնակարգերը (4),

քանի որ թիվ 3820/85 (5) եւ թիվ 3821/85 (6) կանոնակարգերը (ԵՏՀ) կարելի է նշանակություն ունեն ջամաքային տրանսպորտի ծառայությունների նպատակով ներքին շուկա ստեղծելու համար,

քանի որ ճանապարհային տրանսպորտի ոլորտում սոցիալական կանոնակարգերի պատշաճ կիրառությունը պահանջում է համընդհանուր եւ արդյունավետ վերահսկողություն անդամ պետությունների կողմից,

քանի որ համապատասխան դրույթների պահպանումը ստուգելու նպատակով անհրաժեշտ է ներմուծել նվազագույն պահանջներ՝ նվազեցնելու կամ կանխարգելելու համար խախտումները,

քանի որ Պորտուգալիայի Հանրապետությունը միայն վերջերս է ներմուծել ստուգման ընթացակարգեր ճանապարհային տրանսպորտի ոլորտում եւ պետք է համապատասխանաբար իրավունք ունենա հետաձգելու սույն Հրահանգի կիրառության ամսաթիվը,

քանի որ Համայնքում արդյունավետ եւ գործուն վերահսկողություն իրականացնելու համար պահանջվում է տեղեկություններ փոխանակել անդամ պետություններում կանոնակարգերի կիրարկման մասին եւ փոխադարձ օժանդակություն ցուցաբերել նույն ոլորտում,

քանի որ տեղեկությունների փոխանակումը պարտադիր է եւ պետք է կատարվի կանոնավոր միջակայքերով,

քանի որ սոցիալական կանոնակարգերի միասնական կիրառությունը ճանապարհային տրանսպորտի ոլորտում անհրաժեշտ է՝ խուսափելու համար տրանսպորտի ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջեւ մրցակցության խաթարումից, ինչպես նաեւ խթանելու համար ճանապարհային անվտանգությունն ու սոցիալական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ,

### *Հոդված 1*

#### **Ստուգումները**

Սույն Հրահանգը նպատակ ունի սահմանելու նվազագույն պայմաններ (ԵՏՀ)՝ թիվ 3820/85 եւ (ԵՏՀ) թիվ 3821/85 կանոնակարգերի միասնական ու ստույգ կատարումը վերահսկելու համար:

### *Հոդված 2*

#### **Ստուգման համակարգերը**

1. Անդամ պետությունները կազմակերպում են համապատասխան եւ կանոնավոր ստուգումների համակարգ թե՛ ճամփեզրին, եւ թե՛ տնտեսավարող սուբյեկտների գործունեության տարածքում՝ յուրաքանչյուր տարի վերահսկելով վարորդների, տնտեսավարող սուբյեկտների եւ փոխադրամիջոցների մեծ ու ներկայացուցչական ընտրված խումբ՝ տրանսպորտի բոլոր կատեգորիաների համար, որոնք կարգավորվում են թիվ 3820/85 եւ թիվ 3821/85 կանոնակարգերով (ԵՏՀ):

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ստուգումներն այնպես է կազմակերպում, որ

- վերահսկվեն թիվ 3820/85 եւ թիվ 3821/85 կանոնակարգերով (ԵՏՀ) կարգավորվող փոխադրամիջոցների վարորդների աշխատած օրերի առնվազն 1 %-ը յուրաքանչյուր տարի.

- ստուգված աշխատանքային օրերի ընդհանուր թվի 15 %-ից ոչ պակաս ստուգվի ճանապարհների վրա եւ 25 %-ից ոչ պակաս ստուգվի տնտեսավարող սուբյեկտի գործունեության տարածքում:

3. Ճամփեզրին ստուգման ենթարկված վարորդների թիվը, տնտեսավարող սուբյեկտների գործունեության տարածքում կատարված ստուգումների թիվը, ստուգված օրերի եւ հայտնաբերված խախտումների թիվն ընդգրկվում են, մասնավորապես, Հանձնաժողով ուղարկվող տեղեկությունների մեջ՝ թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 16 (2) հոդվածի համաձայն:

### Հոդված 3

#### **Ճանապարհին կատարվող ստուգումներ**

1. Ճանապարհին կատարվող ստուգումները կազմակերպվում են տարբեր վայրերում ցանկացած ժամանակ՝ ներառելով ճանապարհային ցանցի ընդարձակ հատված այնպես, որ, դժվար լինի խուսափել ստուգման կետերից:

2. Ճանապարհին կատարվող ստուգումների տարրերն են՝

- փոխադրամիջոց վարելու, ընդմիջումների եւ հանգստի ժամանակահատվածը օրվա կտրվածքով, իսկ նորմերի խախտում հայտնաբերելու դեպքում՝ նաեւ տվյալ փոխադրամիջոցում արձանագրված տվյալները նախորդ օրերի համար թիվ 3821/85 կանոնակարգի (ԵՏՀ) 15 (7) հոդվածի համաձայն.

- վերջին հանգստի շրջանը շաբաթվա կտրվածքով, եթե անհրաժեշտ է.

- արձանագրող սարքերի ճիշտ աշխատանք (սահմանվում է, թե արդյոք այդ սարքերը եւ (արձանագրման թերթիկները չարաշահվել են) եւ, հարկ եղած դեպքում, առկա են արդյոք, թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 14 (5) հոդվածում նշված փաստաթղթերը:

3. Ճանապարհին կատարվող ստուգումներն իրականացվում են առանց փոխադրամիջոցների եւ վարորդների միջեւ խտրականությունն դնելու, անկախ այն բանից, տվյալ վարորդը այդ անդամ պետության ռեզիդենտ է, թե ոչ:

4. Իրավասու տեսուչի աշխատանքը հեշտացնելու նպատակով տեսուչին տրվում է՝

- ստուգման ենթակա հիմնական կետերի ցանկը.

- լեզուների քարտեզ, որի մեջ ընդգրկված են այն արտահայտությունները, որոնք տվյալ պահին օգտագործվում եւ վերաբերում են ճանապարհային տրանսպորտի գործունեությանը: Հանձնաժողովն անդամ պետություններին նման քարտեզ է ներկայացնում:

5. Եթե մեկ այլ անդամ պետությունում գրանցված փոխադրամիջոցի վարորդի հետ անցկացրած ճանապարհային ստուգումների արդյունքներով հիմնավորվում է, որ կատարվել են այնպիսի խախտումներ, որոնք հնարավոր չէ հայտնաբերել ստուգման ընթացքում անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով, ապա համապատասխան անդամ պետությունների իրավասու մարմիններն օժանդակում են միմյանց՝ իրավիճակը պարզելու համար: Եթե այդ նպատակով իրավասու անդամ պետությունն իրականացնում է ստուգումներ տնտեսավարող սուբյեկտի գործունեության տարածքում, ապա նման ստուգման արդյունքներն ուղարկվում են համապատասխան այլ անդամ պետություն:

#### Հոդված 4

##### **Տնտեսավարող սուբյեկտի գործունեության տարածքում կատարվող ստուգումները**

1. 2(1) հոդվածով սահմանված ստուգումները տնտեսավարող սուբյեկտի գործունեության տարածքում պլանավորվում է՝ հաշվի առնելով տրանսպորտի տարբեր կատեգորիաների հետ նախկին փորձը:

Տնտեսավարող սուբյեկտի տարածքում իրականացվում են ստուգումներ, եթե ճանապարհին հայտնաբերվել են թիվ 3820/85 եւ թիվ 3821/85 կանոնակարգերի (ԵՏՀ) լուրջ խախտումներ:

2. Տնտեսավարող սուբյեկտի տարածքում իրականացվող ստուգումների տարրերը հետեւյալն են, որոնք լրացնում են ճանապարհային ստուգման տարրերը՝

- շաբաթվա կտրվածքով հանգստի շրջանները եւ հանգստի շրջանների միջեւ աշխատանքային շրջանները.

- փոխադրամիջոցը վարելու ժամերի սահմանափակումը՝ երկու շաբաթ տեւողությամբ.

- օրական եւ շաբաթական շրջանների կրճատման համար տրվող փոխհատուցումը.

- օրական կամ շաբաթական հանգստի կրճատված շրջանների համար տրվող փոխհատուցումը.

- արձանագրության թերթերի օգտագործումը եւ (կամ) վարորդների աշխատանքային ժամերի կազմակերպումը:

3. Սույն հոդվածում սահմանված նպատակներով, իրավասու մարմինների տարածքում իրականացվող ստուգումներն այդ մարմինների պահանջով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի հիման վրա ունեն նույնպիսի կարելոթյուն, ինչպիսիք ունեն տնտեսավարող սուբյեկտի տարածքում իրականացված ստուգումները:

#### Հոդված 5

##### **Համաձայնեցված եւ համակարգված ստուգումները**

1. Անդամ պետությունները առնվազն տարեկան երկու անգամ ձեռնարկում են համաձայնեցված գործողություններ՝ թիվ 3820/85 եւ թիվ 3821/85 կանոնակարգերի (ԵՏՀ) գործողության շրջանակում կարգավորվող փոխադրամիջոցների ու վարորդների ստուգումներ իրականացնելու համար:

2. Նման միջոցառումները հնարավորության դեպքում իրականացվում են երկու կամ ավելի անդամ պետությունների իրավապահ մարմինների կողմից միաժամանակ՝ յուրաքանչյուրն իր տարածքում:

## Հոդված 6

### Տեղեկությունների փոխանակում

1. Թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 17 (3) հոդվածի եւ թիվ 3821/85 կանոնակարգի (ԵՏՀ) 19 (3) հոդվածի համաձայն՝ երկկողմ ներկայացված տեղեկությունները փոխանակվում են սույն Հրահանգի (1) ծանուցումից հետո վեց ամիս հետո յուրաքանչյուր 12 ամիսը մեկ, ինչպես նաեւ առանձին դեպքերում՝ այդ պետության կողմից հատուկ պահանջի դեպքում:
2. Անդամ պետությունների իրավասու մարմիններն այս նպատակով օգտագործում են հաշվետվության ստանդարտ ձեւ, որը կազմվում է Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների հետ համաձայնության արդյունքում:

## Հոդված 7

1. Բացառությամբ Պորտուգալիայի Հանրապետության՝ անդամ պետությունները գործողության մեջ են դնում օրենքներ, կանոնակարգեր եւ վարչական դրույթներ, որոնք ամենաուշը մինչեւ 1989 թվականի հունվարի 1-ը անհրաժեշտ են՝ սույն Հրահանգի պահանջները կատարելու համար:  
Պորտուգալիայի Հանրապետությունը նշված օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները գործողության մեջ է դնում ամենաուշը մինչեւ 1990 թվականի հունվարի 1-ը:
2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում սույն Հրահանգի կիրառությանը վերաբերող օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները:

## Հոդված 8

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1988 թվականի նոյեմբերի 23-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Թ. ՊԱՆԳԱԼՈՍ

1) ՊՏ թիվ C 116, 03.05.1988թ., էջ 17:

2) 1988 թվականի նոյեմբերի 17-ին ներկայացված եզրակացություն (դեռ հրապարակված չէ Պաշտոնական տեղեկագրում):

3) ՊՏ թիվ C 208, 08.08.1988թ., էջ 26:

4) ՊՏ թիվ C 348, 31.12.1985թ., էջ 1:

5) ՊՏ թիվ L 370, 31.12.1985թ., էջ 1:

6) ՊՏ թիվ L 370, 31.12.1985թ., էջ 8:

1) Սույն Հրահանգը ծանուցվել է անդամ պետություններին 1988 թվականի նոյեմբերի 24-ին: